

ՉԱՅ ԳՐԱԶՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ
(Ճեմարանի տպարանի պատմությունից*)

1815 թ. Մոսկվայում լազարյան ճեմարանի լուսացումը խոշոր իրադարձություն էր հայ մշակութային կյանքում: Լազարյան գերդաստանի միջոցներով հիմնադրված և պահվող այս ուսումնական հաստատությունը անմիջապես իր պատվավոր տեղը գրավեց ոչ միայն հայկական, այլև ռուսական խոշոր ուսումնական հաստատությունների շարքում:

Լազարյանների մտահղացմամբ ճեմարանը կոչված էր լավագույն կրթություն տալու հայ պատանիներին՝ նրանցից պետական պաշտոնյաներ և հոգևորականներ պատրաստելու նպատակով: Այս խնդրի իրականացման ուղղությամբ լազարյանները զգալի ճիգեր են գործադրել: Այս գործում կարևոր քայլերից մեկը ճեմարանում գրահրատարակչական գործի կազմակերպումն ու կարգավորումն էր:

1828 թ. լազարյան եղբայրները գնում և Մոսկվա են տեղափոխում դեռևս 1811 թ. Պետերբուրգում հիմնադրված Հովսեփ քահանա Հովհաննիսյանի տպարանը, որը տեղադրվում է ճեմարանի կողաշենքի երկրորդ հարկի մի փոքրիկ սենյակում: 1848 թ., երբ լազարյան ճեմարանը դարձավ առաջին աստիճանի ուսումնական հաստատություն, մշակվեց և հաստատվեց ճեմարանի «Կանոնադրությունը», որով որոշվեց նաև տպարանի տեղը և գործունեության կարգը: «Կանոնադրության» § 88-ում ասվում էր, որ ճեմարանի տպարանը «հոգաբարձուի թույլտվությամբ կա՞մ տրվում է վարձակալման, կա՞մ էլ գտնվում է վարչության անմիջական ենթակայության և հսկողության տակ, ելնելով նրանից, թե հաստատության համար որն է ավելի շահեկան: Այս վերջին պարագայում ճեմարանի վարչության հայեցողությունից

է կախված տպարանի ներքին կառավարման կարգը»¹: § 80-ը նախատեսում էր ճեմարանի իրավունքը. «Իր անունից լույս ընծայել ճառեր, գատողություններ, ծրագրեր և հաշվետվություններ, բայց այնպես, որ դրանք նախօրոք քննարկվեն խորհրդում գրաքննչական կանոնների հիման վրա»: Նախատեսվում էր նաև տրպաբանին կից սեփական գրավաճառատուն ունենալու ճեմարանի իրավունքը:

Մինչև 1857 թ. տպարանը զբաղեցնում էր մեկ սենյակ, ուներ երկու տպագրական հաստոց, հայերեն, ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն, լատիներեն, արաբական տառատեսակներ: Նույն թվականին լազարյանները վիճենայում տեղի Միխայիլայաններից գնում են յամանակի լավագույն հայերեն տառատեսակները, ինչպես նաև ստեղծում են սեփական տառաձուլարան:

Սակայն լազարյանները դժգոհ էին տպագրատուն աշխատանքից: Հովհաննես լազարյանը 1853 թ. ճեմարանի վարչությանը ուղղված իր մի նամակում գրում էր, որ տպարանը «միշտ վատ է կառավարվում, այդ իսկ պատճառով համարյա ոչ մի շաբաթ չի բերել, բացառությամբ այն ժամանակներից, երբ հայ քահանա Իսսիճ Թումանյանը (Հովսեփ Հովհաննիսյանը — Ա. Ս.) վաճառեց մեզ իր տպարանը՝ ինքր այն կառավարելով և ճեմարանին օգուտ բերելով, սկզբում վարձակալությամբ, այնուհետև պարզապես կառավարելով և եկամուտ բերելով»²:

XIX դարի հիսունական թթ. սկսած առաջին բայերն են արվում ճեմարանն ու նրա տպարանը, լուսավորության, գիտության և առանձնապես հայագիտության զարգացման կենտրոն

¹ Высочайшие указы, устав и штат Лазаревского института Восточных языков в Москве и правила одного высочайше утвержденные М., 1852, с. 36.

² Նույն տեղում, էջ 27:

³ Центральный государственный исторический архив г. Москвы (ЦИАМ), ф. 213, оп. I, д. 251, л. 5.

* Մեր շնորհակալությունն ենք հայտնում Մոսկվայի ռուս-հայկական բարեկամության թանգարանի կոլեկտիվին և վարիչ Ա. Վ. Գրիգորյանին, հոգավոր նախապատրաստման ժամանակ ցույց տրված բազմակողմանի օժանդակության համար:

դարձնելու ուղղությամբ: Իր հրատարակչական ծրագրերի իրագործմանն է ձեռնամուխ լինում պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանը:

1854 թ. նա դիմում է ճեմարանի վարչության՝ խնդրելով թույլատրել օրոսիա պարբերականի հրատարակությունը: Առաջարկվող պարբերականի գլխավոր նպատակը Ս. Նազարյանը տեսնում էր օրոսաստանի և այլ տեղերում ցրված հայ համայնքների միջև մտավոր ու բարոյական կապող օղակ ծառայելու մեջ⁴: Ամսագրի նախագիծը, որ ժամանակին հրատարակել է Սալոմեա Արեշյանը, քաջ հայտնի է: Հայտնի է նաև Հովհաննես Նազարյանի մերժումը, որը պայմանավորված էր գրաքննչական բարդություններով, ավելի ճիշտ՝ Մոսկվայում հատուկ գրաքննչի բացակայությամբ: Լազարյանը գրում էր. «Ձեռք հայտնի է, որ Մոսկվայում հրատարակվում են բավական քիչ թվով գրքեր արևելյան լեզուներով, այսպիսով միջնորդել հատուկ գրաքննչի նշանակելու համար հայերեն լեզվով միայն մեկ պարբերականի պատճառով իմ ողջ ցանկությամբ հանդերձ, դառնում է անհարմար...»⁵: Մերժման անհամոզել պատճառաբանությունը ակնհայտ է, որովհետև հենց գրաքննչի առկայությունն էր հնարավոր դարձնում հրատարակչական գործի ծավալումը: Սակայն հետազոտողների ուշադրությունից վրիպել է մի փաստաթուղթ, որ մկայում է Նազարյանի հրատարակչական պլանների նկատմամբ ճեմարանի վարչության վերաբերմունքի մասին: Մեզ հասնող վերաբերմունքն ակնհայտ էր հոգաբարձուին ուղղված վարչության գրության սեղանի տեքստը, որը բերում ենք թարգմանաբար և ամբողջությամբ. «Ճեմարանի պրոֆեսոր Նազարյանը նկատի ունի գիտելիքների տարածումը իր ազգակիցների շրջանում նրանց մայրենի լեզվով: Մյուս կողմից, ցանկանալով օգուտ բերել հայ պատանեկության կրթության կենտրոնին՝ ճեմարանին, հույսովալ միտք հղացավ ամսագիր հրատարակել ժամանակակից հայերեն լեզվով: Նախագիծն ենթակայցված և Ձերդ Գերազանցության քննարկմանը հանձնված առաջարկվող ամսագրի օգտակարությունը նկատի առնելով, պատիվ ունենք խոնարհաբար խնդրել Ձ. Գ. բարձրագույն ղեկավարության առջև միջնորդել հիշյալ հրատարակությունը թույլ տալու համար: Պրոֆեսոր Նազարյանի ազնիվ և օգտակար ձգտման իրականացումը կարող է հանդիպել ներկայացող բարդության, զա գրաքննություն

է, որովհետև Մոսկվայում չկա գրաքննչի հայերեն լեզվով հրատարակությունների համար (իսկ Թիֆլիզ ուղարկելը, որտեղ գտնվում է գրաքննչի, հոգս կլինի ամսագրի համար, որովհետև կհանդիպի տարբեր բարդությունների):

Հնդ որում Ձ. Գ. հայտնի է, որ նախկինում բազմիցս զգացվել է Մոսկվայում գրաքննչի պակասությունը հայերեն հրատարակությունների համար: Այդ իսկ պատճառով... անհրաժեշտությունը ստիպում է Ձ. Գ. հայեցողությունը ներկայացնել գրաքննչի կարիքը և խնդրել Ձ. Գ. միջնորդությունը բարձրագույն իշխանությունների առջև Մոսկվայում հայերեն լեզվով հրատարակությունների գրաքննչի նշանակելու համար այնպես, ինչպես Կաղանում կա արևելյան լեզուների տեղական գրաքննչի:

Ծթն Ձ. Գ. հարմար կլինի ընդունել այս առաջարկությունը, ապա կարծում են, որ գրաքննչի պարտականությունները հաշտությամբ կարող է կատարել հայոց լեզվի պրոֆեսոր Մեկերտիչ Էմինը: Բայց քանի որ նման զբաղմունքը կպահանջի բազում ջանքեր և պատասխանատվություն, ապա անհրաժեշտ է վճարել: Կազանում արևելյան լեզուների տեղական գրաքննչի իր ծառայությունների համար ստանում է 300 ռուբլի արծաթով տարեկան: Այսուհանդերձ, անհրաժեշտ են համարում ավելացնել, որ ճեմարանը իր միջոցների սղության պատճառով չի կարող իր վրա վերցնել հիշատակված վարձի վճարումը⁶:

Մոսկվայում հայերեն լեզվի գրաքննչի նշանակման հարցը մեծ կարևորություն ունի: Մոսկվայի հայերեն հրատարակությունների համար գոյություն ունեցող հոգևոր գրաքննությունը, որը իրականացնում էին Մոսկվայի հայկական եկեղեցիների հոգևոր վարչության անդամները, հնարավոր էր դարձնում բացառապես կրոնադավանաբանական և ուսումնական գրականության լույս ընծայումը: Իսկ աշխարհիկ գրաքննությանը ենթակա գրականությունը ուղարկվում էր Թիֆլիս, ավելի ուշ նաև Պետերբուրգ: Այսպիսով, վերոհիշյալ առաջարկի մերժումը Հովհ. Նազարյանին բնորոշ պահպանողականության ևս մեկ դրսևորումն էր: Նշենք, որ բերված նամակը Նազարյանի ձեռնարկումների ճեմարանի վարչության կողմից առաջին և վերջին օժանդակության դրսևորումն էր:

Սակայն դրանից հետո էլ Նազարյանը չի թողնում իր ծրագրերը: 1856 թ. նա դիմում է պարբերական հանդես հրատարակելու թույլտրվության համար, այս անգամ Պետերբուրգի գրաքննչական կոմիտե: 1857 թ. ցանկանալով դուրացնել հանդեսի հրատարակության գործը,

⁴ Նույն տեղում, գ. 177, թ. 3:

⁵ См. С. А. Решаян. Армянская печать и царская цензура. Ереван, 1957, с. 429—437.

⁶ ЦГИАМ. ф. 213, оп. 1, д. 177, л. 12.

Նազարյանը ճեմարանի վարչությանն է դիմում տպարանը վարձակալելու խնդրանքով: Այդ մասին է դրում դիրեկտորը, հոգարարձուին ուղղված զեկուցագրում. «Պատիվ ունեմ հայտնելու Ձերդ Գերազանցությանը, որ ճեմարանի պրոֆեսոր, պետական խորհրդական Նազարյանցը առաջարկում է տպարանը հանձնել վարձակալման իրեն հայտնի անձին՝ վճարելով 200 ռուբլի արծաթով տարեկան»:¹ Ընդ որում այդ զեկուցագիրը կազմված էր այնպիսի բացառիկ անրարյացակամ ոգով, որ այստեղ հիշատակվում էր և Նազարյանի չվճարված պարտքը լույս ընծայված ընդհանուր հայտնությունն առարկա, նաև հայտնվում էր, որ նույնիսկ առանց այդ վերոհիշյալ պարտքի տպարանի շահույթը կազմում է տարեկան 193 ռուբլի 44³/₄ կոպեկ արծաթով²:

Ստ. Նազարյանի խնդրանքը մնում է անպատասխան:

1858 թ. Հովհ. Լազարյանը ուշադրություն է դարձնում տպարանի բարձիթողի վիճակի և անգործունեության վրա: Նա առաջարկում է Մըկերիչ էմինին վերակառուցել տպարանն ու գրառարանն այնպես, որ այն դառնա ավելի շահութաբեր: 1859 թ. հունվարին էմինը ճեմարանի վարչության հետ տպարանի վարձակալման մասին պայմանագիր է կնքում 7 տարի ժամկետով: Վերակառուցման նպատակին լազարյանները զգալի միջոցներ են տրամադրում, լայացիքում Բրոկհաուզի նշանավոր ընկերությունից գնվում են նոր արագատիպ հաստոցներ: Զգալիորեն ավելանում է բանվորների թիվը: Թիֆլիսի նշանավոր գրավաճառ և տպագրիչ Ա. Էնֆիաշյանի օգնությամբ Մոսկվա են տեղափոխվում փորձված տպագրիչ-վարպետներ Դսալին և Բաղդասարը: 1861 թ. տպարանում աշխատում էր ավելի քան 25 բանվոր: Տըպարանի վերակառուցման աշխատանքների ծավալի մասին են վկայում պահպանված դրամական հաշիվները: Եթե 1859 թ. բոլոր հաստոցների, գործիքների և այլ գույքի ընդհանուր արժեքը 2027 ռուբլի էր, ապա 1862 թ.՝ 25041 ռուբլի, իսկ 1863 թ.՝ 26517 ռուբլի:

Էմինի վարձակալման տարիներին գրահրատարակչական գործը անհամեմատ աշխուժացավ: Լույս տեսան Մ. Չամչյանի «Հայոց լեզվի քերականությունը», տարբեր ուսումնական ծրարագրեր, ճեմարանի ընդունելության կանոնները, ֆունդամենտալ գրադարանի գրացուցակները հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: 1862 թ. տպարանը ի վիճակի էր լույս ընծայելու պոլիգրաֆիական բարձր մակարդակով գրականություն հայերեն, ռուսերեն, ֆրան-

սերեն, գերմաներեն, հունարեն, վրացերեն, թուրքերեն, արաբերեն, ղպտերեն լեզուներով:

Հենց այս տարիներին են տպագրվել Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլը», Մսեր և Զարմայր Մսերյանցների «Համաբնական Ուսուցում» և «Ընթացիկ»:³ Հետաքրքիր է, որ 1860 թ. այդ հայերեն հանդեսները հետաքրքրությամբ են ընդունվում ռուսական հրատարակչական շրջաններում: Դրանց մասին տեղեկություններ է տալիս «Книжные Вестники» հանդեսը⁴:

Այս տարիների խոշորագույն ձեռնարկումը միշնադարի հայ հեղինակների աշխատությունների հրատարակությունն էր: Մկերիչ էմինը այս ուղղությամբ առաջին քայլերն արել էր դեռևս 1853—1854 թթ.: Հրատարակելով միջնադարյան հայ հեղինակների առանձին երկեր ինչպես լազարյան ճեմարանի, այնպես էլ նրա հետ սերտորեն կապված Վոլոգդյան Գոթիկի տըպարաններում, նա դիմում է լազարյաններին՝ առաջարկելով քնել և իրենց միջոցներով հրատարակել առավել նշանակալից հինգ պատմիչների՝ Ստեփանոս Օրբելյանի, Մովսես Կաղանկատվացու, Վարդան Բարձրաբերգցու, Մխիթար Այրիվանցու և Ուխտանեսի երկերը: Հինգ տարի տեւած նամակագրությունից հետո լազարյանները համաձայնում են սկսել այս գործը:

Արժանին պետք է հատուցել լազարյանների այս քայլին: Նրանք խորապես գիտակցել էին այս աշխատությունների հրատարակման ողջ նշանակությունը: Առաջինը 1860 թ. լույս տեսավ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը», և լազարյան եղբայրները այս գիրքը Ալեքսանդր II-ին ներկայացնելու իրավունք ստացան: Այնուհետև լույս տեսան և մյուս երկերը, բացի Ուխտանեսի «Պատմությունից»: Լազարյանները թույլատրում էին յուրաքանչյուր գրքի հրատարակությունը՝ նախապես ճշտելով և համոզվելով, որ հայ իրականության մեջ դրանք իրականացվում են առաջին անգամ: Չնայած գրահրատարակչական գործը ճեմարանում գնալով ավելի լայն թափ էր ստանում, սակայն 1862 թ. շեմին այդպես էլ չդարձավ շահութաբեր: Մկերիչ էմինը, չկարողանալով կատարել կապալային պայմանագրով իր ստանձնած պարտականությունները, ժամկետից շուտ հրաժարվեց կապալից: Տպարանի նոր վարձակալ դարձավ մոսկովյան վաճառականի որդի Անատոլի Մամոնտովը: Արդեն այս ժամանակից սկսած կրճատվում է հայերեն հրատարակությունների թիվը: Դրանցից ստաց-

³ См. в Книжных Вестник, 1860, №№ 17—18, с. 200—201.

¹ Նույն տեղում, ց. 1, գ. 231, թ. 1:

ված շահույթը ընդին էր և այդ պատճառով էլ Մամոնտովը տարբեր պատրվակներով հրաժարվում էր հայալեզու գրականություն տպագրել: Պատահում էին նաև արտասովոր դեպքեր. այսպես, 1865 թ. Զարմայր Մսերյանցը, դիմելով ճեմարանի վարչությանը, բողոքում էր, թե Մամոնտովը հրաժարվել է տպագրել կրոնական բովանդակություններ իր հերթական աշխատություններ: Միևնույն ժամանակ Մամոնտովը արդարապես էր՝ պատճառաբանելով, որ ինքը արգահատանք է տաժում դեպի Մսերյանցի անձը և յի ցանկանում որևէ գործ ունենալ նրա հետ:

Տպարանի տպագրիչ բանվորների այդ տարիների ծանր վիճակի մասին իր հուշերում գրել է Ղազարոս Աղայանը, որը մի կարճ ժամանակ աշխատել է այնտեղ որպես գրաշար: «Մենք տեղափոխվեցինք տպարանի բանվորների բնակարանը: Լուսավորյալ անվանված քաղաքները այնպիսի խավար ու մութ անկյուններ ունին, որ Ասիայի ոչ մի խավար քաղաք չունի: Այն բնակարանները, որոնց մեջ կենում էին Մոսկվայի բանվորները, շատ և շատ օտոր էին մեր ամենահատին գյուղի ախոռից և հավաքներից: Այն սնունդը, որ նրանք էին ստանում, տասնպատիկ վատ էր, քան թե մեր շների լակն ու լափը: Մեր բնակարանը մի սենյակ էր, որի մեջ կային երեք լայն թառեր՝ մեկը մյուսից բարձր: Փառաստենի շափ բանվորներ և աշակերտներ գիշերում էին այդ թառերի վրա իրենց սովորական կուտն ուտելուց հետո: Վերի թառը առաստաղից ցածր էր միայն $\frac{3}{4}$ արշին. այնտեղ պառկողները պետք է սանդուղքով բարձրանային և ներս խցկվեին օձի պես սողալով... Ճաշն ու ընթրիքը նախաճաշով արժեք երեք մանեթ ամիսը ամեն մի հոգու համար: Այս գնիցը կարելի էր հզրակացնել արդեն, թե այդ ինչ սնունդ պիտի լինի: Այնպես որ չլինի, ինչպես պետք է ապրե ամսական երկու, երեք և չորս մանեթ ռոճիկ առնողը... Փաղաքի բանվորներին և սակավ են ուտեցնում և վատա՞:

Ղ. Աղայանը, ըստ հիշույթին, նկատի ունի աշակերտներին և օժանդակ բանվորներին, որակյալ բանվորներն ավելի բարձր էին վարձատրվում. որակյալ գրաշարի վարձը ամսական հասնում էր 25—30 ռուբլու արծաթով:

1860-ական թթ. դրամական նվիրատվությունները ճեմարանին գրեթե դադարեցին: 1861 թ. ռեֆորմը ծանր հարված հասցրեց նորտառեր լազարյանների ֆինանսական դրությամբ: Այս տարիներին լազարյան եղբայրները

մշտապես կոչում էին խնայողության, պահանջում էին կրճատել անգամ անհրաժեշտ ծախսերը: Ասես արդարացնելու համար խնայողության իր պահանջը, հոգաբարձուն հիշեցնում էր տարբեր ժամանակ իր տոհմի ներկայացուցիչների կողմից ճեմարանին նվիրաբերած ահեղի գումարների մասին, ընդ որում բողոքում էր, որ մյուս մեծահարուստ ռուսահայերը բարեգործությանը չեն գրավում, չեն օգնում ճեմարանին:

1866 թ. որոշվեց վաճառել տպարանը: Մայրաքաղաքի թերթերում հայտարարություններ տպվեցին տպարանի վաճառքի մասին, սակայն գներդներ չգտնվեցին: Հոկտեմբերի մեկին տպարանը ընդամենը 16 000 ռուբլով (համարյա կես գնով) գնեց Անատոլի Մամոնտովը, Բայց դրանից հետո էլ գրահրատարակչական գործը լազարյան ճեմարանում չընդհատվեց: 1872 թ. արարական բանասիրության պրոֆեսոր Մարկուսի նախաձեռնությամբ ճեմարանի գրադարանում բացվեց արևելյան գրականության հատուկ բաժին: Այդ ժամանակից ի վեր տպագրվում էին արևելագիտական աշխատություններ, մասնավորապես լույս տեսան պրոֆեսորներ Ա. Խախանովի և Դ. Արակչեևի (Արակչիշվիլու) վրացագիտական ուսումնասիրությունները: Վրաց գրքի պատմության հետազոտող Ա. Արամիշվիլու վկայությամբ 1880—90-ական թթ. լազարյան ճեմարանը դարձավ վրացագիտական գրականության հրատարակման խոշոր կենտրոն¹⁰,

Տպարանի փակումից հետո և մինչև 1890-ական թթ. ճեմարանի խորհուրդը հայերեն գրքեր չի հրատարակել: Դա բացատրվում էր մի շարք հանգամանքներով: Ճեմարանի գրապահոցներում, ընդհուպ մինչև դարի վերջը կուտակված էին մնացել տարբեր ժամանակներում տպագրված և չվաճառված զգալի քանակությամբ հայերեն գրքեր: 1670—80-ական թթ. փոփոխվեցին ճեմարանի առջե գրված խնդիրները, պակասեց հայազգի աշակերտների թիվը աշակերտության ընդհանուր թվում: Փանի որ արդեն տպագրված ուսումնական գրականությունը համարվում էր Անդրկովկասից, ավելի հազվադեպ՝ Վենետիկից ու Պոլսից ստացվող հրատարակություններով: սեփական նոր հրատարակությունների անհրաժեշտությունը կարծես թե չէր զգացվում: 1890-ական թթ. այս վիճակը փոխվեց: Մոսկվայի տարբեր տպարաններում լույս տեսան էմիլի

¹⁰ А. З. Абрамшвилл. История грузинского книгопечатания за пределами Грузии. Рим—Москва (1629—1917). Кандидатская диссертация, Л., 1947, с. 164.

⁹ Ղ ա զ ա ր ո ս Ա զ ա յ ա ն. Ծրկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1969, էջ 366—368:

ազգադրական ֆոնդի հրատարակությունները, հալաթյանի, Հովհաննիսյանի աշխատությունները, Ճեմարանի հրադարանների գրացուցակները և այլն: Ճեմարանի վարչության որոշմամբ հայերեն լեզվով առանձին հրատարակություններ լույս են ընծայվել և հետագայում՝ ընդհուպ մինչև 1917 թ.:

* * *

Լազարյան ձեմարանի տպարանը առանձնահատուկ տեղ ունի հայ գրատպության պատմության մեջ: Տպարանի հետ էին կապված այդ տարիներին Մոսկվայում բնակվող մեր ազգային մշակույթի բոլոր խոշոր գործիչները: Գուգոնիք չէ, որ հատկապես ձեմարանի գոյությունը պայմանավորեց Մոսկվայի փոքրաթիվ հայ գաղութի հսկայական դերը հայասարակական-քաղաքական ու մշակութային իրականության մեջ: Ճեմարանի գրահրատարակական գործը գնահատելու համար կարևոր է հրատարակությունների թվաքանակ խմբավորումը: Ամենամեծաքանակ խումբն է կազմում ուսումնական գրականությունը. դասագրքեր, քրեատոմատիաներ, տարբեր ձեռնարկներ, ծրարագրեր: Նման հրատարակությունները լույս էին տեսնում հնարավոր ամենամեծ տպաքանակով (1200 կամ 600 օրինակ)՝ ոչ միայն սեփական կարիքների համար, այլև Ռուսաստանի հայկական դպրոցների ուսումնական գրքարանները համալրելու նպատակով: Լազարյան ձեմարանի դիմումում պահպանվել են հայկական այն կրթչախների հասցեները, ուր Մ. Լ.՝ լազրի կեսերին առաքվում էր ձեմարանում տպագրված ուսումնական գրականությունը. գրքանք էին՝ Թիֆլիսի (Ներսիսյան), Երևանի, Ագուլիսի, Ստավրոպոլի, Օդեսայի, Սիմֆերոպոլի, Կարասուբազարի, Օրդուբադարի մասնավոր դպրոցները, Ալեքսանդրապոլի, Գորիի, Թելավի, Բաքվի, Շամախու, Շուշվա, Երևանի, Ախալցխայի, Մոզդուկի, Ղալարի գավառական վարժարանները, Գրիգորիսպոլի, Քիչևեի, Կարասուբազարի, Նոր Նախիջևանի և Աստրախանի թեմական դպրոցները¹¹:

1853 թ. Շուշվա գավառական վարժարանը տեղեկացնում էր, որ ստացվել են քսաներկու աշուն հայերեն հրատարակություններ, դիմանկարներ, էստամպներ: Ելիզավետպոլի գավառական վարժարանը նույն թվականին ստացել էր տասներկու աշուն գրականություն (հիմնականում՝ դասագրքեր)¹²:

Հետադարձության կարծիքով Լազարյան ձեմարանը դրական դեր է խաղացել թե՛ արևելահայ դպրոցների համար տպագրվող դասագրքերի որակի բարելավման և թե՛ դրանց զանգվածային պահանջարկի բավարարման գործում¹³:

Երկրորդ խումբը կազմում են կրոնագավառական հրատարակությունները՝ կանոնագրքեր, սաղմոսագրքեր, եկեղեցական օրացույցներ, Մանրանների, Չերքեզյանի, Հովհաննիսյանի աշխատությունները, Բազմիցս տպագրվել են էջմիածնի Սինոդի հրամանագրեր, կաթողիկոսական կոնդակներ, Մոսկվայի հայկական հոգևոր վարչության որոշումներ, Հարկ է նշել, որ նման վիճակը բնորոշ էր նաև ուսական գրահրատարակական գործին: Ի. Բարենբաումի հաշվարկներով մինչև XIX դարի 60-ական թթ. Մոսկվայի գրահրատարակական արտադրանքում գերակշռում էին դասագրքերը, կրոնական գրքերը, գեղարվեստական գրականությունը¹⁴: Այս հրատարակությունների գերակշռումը պայմանավորված էր ընթերցողների սահմանափակ թվով, պաշտոնական եկեղեցու հսկայական ազդեցությամբ, կղերապաշտական դրական գաղափարները լայնորեն տարածելու իշխող դասակարգերի ձգտումով: Հայ իրականության մեջ դրան ավելանում էր եկեղեցու ձեռնարկով աշխարհի համայնության ծավալվող որոշմունքի պայմաններում զանգվածային օրտակության մեջ միավորել ազգի, սզգային մշակույթի, եկեղեցու և կրոնի հասկացությունները: Մանրանը որ հայ առաքելական եկեղեցին հայերի պետականորեն ճանաչված միակ ներկայացուցիչն էր կայսրությունում՝ իր լուսավորչական և հասարակական հիմնարկներով: Սակայն փաստ է և այն, որ կրոնական գրականությունը ընթերցողների շրջանում լայն ժողովրդականություն չի վայելել:

Առանձին խումբ են կազմում ուսական միավանդներին և Լազարյաններին ձեռնված գրքերը: Ճեմարանի միջոցներով մի գիրք հրատարակելը նշանակում էր այն հրատարակել Լազարյանների ծախսով: Ուստի հրատարակմանը նախորդող գրագրության մեջ առանձնակի ճշտվում էր հեղինակի՝ գիրքը Լազարյաններին նվիրելու պարտավորությունը: Սա առաջ էր բերում առաջուղեմ համանկարկիչների դժգոհություն: Ռաֆայել Պատկանյանը մի նամակում

¹³ Տե՛ս Մ. Լ. Սանթրոսյան. Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին. Երևան, 1964, էջ 201:

¹⁴ И. Е. Баренбаум. История книг. М., 1984, с. 80.

¹¹ ЦГИАМ, ф. 213, оп. I. д. 158. л. л. 63, 89.

¹² Նույն տեղում, թ. 56, 57:

գրում էր. «Պր. Լազարյանը մի գրող գուրս չեն հանել իրանց գրպանից, եթե վստահ չլինին, որ այդ նոր խունկ պիտի լինի նոցա կուտքի, սնահառությունը առաջ»¹⁵:

Եւտ հեղինակների, նույնիսկ ճեմարանի դասախոսների և աշխատակիցների գործերը, որոնք տպագրվում էին ուրիշ մեծահարուստների միջոցներով, յույս էին տեսնում եւ թե Լազարյան տպարանում, այլ՝ Մոսկվայի այլ տպագրական հաստատություններում՝ Գոթիների, Կատկովի, Սեմենովի մոտ:

Ամենանշանակալից և այժմ արժեքավոր հրատարակությունների խումբը կազմում են հայ միջնադարյան հեղինակների երկերը և հայագիտական աշխատությունները: Հատկապես միջնադարյան պատմիչների՝ ստեղծագործությունների մոսկովյան հրատարակությունները առ այսօր չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը:

Առանձին խումբ են կազմում նաև ճեմարանի սաների արձակ և շահածո ստեղծագործությունները:

Լազարյան ճեմարանի տպարանը իր տեղն է՝ ունեցել նաև մեր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում: Օրինակ, 1854 թ. դեկ-

տեմբերին այստեղ են մտերմացել Ստեփանոս Նազարյանը և Միքայել Նալբանդյանը, որոնց «Նոր Հայխոսություն» և «Հավերժական ճամփորդը» գրքերը տպագրվում էին միաժամանակ¹⁶: Այդ մտերմությունից սկսված համագործակցությունը հանգեցրեց «Հյուսիսսահայլի» հրատարակմանը: «Հյուսիսսահայլի» ժամանակաշրջանը, Լեոյի դիպուկ արտահայտությամբ, «Մոսկվայի գաղութի ազդեցության ամենափայլուն ժամանակն էր՝ Վիպագրությունը, բանաստեղծությունը, թատերագրությունը, միացած ազդու հրապարակախոսության հետ, այնպիսի հեղինակություն տվին Մոսկվայի հայ գործիչներին, որ թվում էր, թե հայոց նոր գրականությունը ընդմիջտ իրա համար՝ անշարժ ընակության՝ վայր է ընտրել Ռուսաստանի հին մայրաքաղաքը»¹⁷:

Լազարյան ճեմարանին կից գործել է ժամանակի արևելահայ խոշորագույն տպագրական-գրահրատարակչական՝ հաստատությունը, որի պատմությունը XIX դարի հայ տպագրության պատմության նշանակալից էջերից է:

Ա. Վ. ՄԱՅԱՐՏԱՆ

¹⁶ ЦГИАМ, ф. 213, оп. I, л. 144, л. 15.

¹⁷ Լեո. Երկերի ժողովածու. հ. V, Երևան, 1986, էջ 607:

¹⁵ Ռ. Պատկանյան. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1970, էջ 69: